



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՏՀՏ-ի դերը աշխարհագրության  
ուսումնասիրման, սովորողների այլընտրանքային մտածողության  
զարգացման գործում, առաջադրանքների կազմման հմտություններ  
Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ն.Վարդանյան

Ուսումնական հաստատություն՝ 'Մասիսի h.5 ավագ դպրոց' ՊՈԱԿ

Որքանով է ՏՀՏ-ն նպաստում աշխարհագրական գիտելիքների  
խորացմանը

# Բովանդակություն

Ներածություն.....	4
1. ՏՀՏ-ների դերը աշխարհագրության ուսումնասիրման գործում.....	6
2. Աշխարհագրության դասի ուսուցման գործընթացի կազմակերպումը.....	10
3. Եզրակացություններ.....	15
4. Գրականության ցանկ.....	16

# Ներածություն

Ներկա աշխարհում կտրուկ աճել ու ընդլայնվել է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունները համացանցի ի հայտ գալով ու մարդու գործունեության ցանկացած ոլորտ, այդ թվում և կրթության, խոր ներթափացմամբ: Ուսուցման էլեկտրոնային ձևերի օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման նոր մեթոդների զարգացման համար:

Միաժամանակ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներմուծումը ուսուցման պրոցեսում ձևավորում է մի շարք հիմնախնդիրներ, որոնք կապված են համապատասխան ծրագրային ապահովման մշակման, էլեկտրոնային միջոցների բովանդակային հագեցվածության և կրթության ոլորտում օգտագործման հետ: Վերջին շրջանում արվել են շատ հետազոտություններ, որոնցում հիմնավորվել են ուսուցման էլեկտրոնային միջոցների տեսական մշակման և գործնական կիրառման հնարավորությունները:

Մեր կյանքի կարևորագույն բաղադրիչներից մեկը, դա կրթությունն է, որի կազմակերպման արդյունավետ ձևերից ու զարգացման մակարդակից է մեծապես կախված մեր հասարակության հուսալի ապագան: Ըստ հասարակության զարգացման ժամանակակից ձգտումների կանխատեսվում է, որ ապագայում սոցիալ-քաղաքական ու տնտեսական ոլորտները կունենան տեխնոլոգիական բարձր հագեցվածություն: Դա վերաբերում է նաև հանրակրթությանը: Ներկայիս կրթական բարեփոխումների փուլում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից է: Հետևաբար ենթադրվում է, որ ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթության բնագավառում մեծապես կնպաստի կրթության ապահովմանը: Ժամանակակից հանրակրթության համակարգը անհնարին է պատկերացնել առանց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Այն միայն ուսումնական գործընթացը տեխնիկական միջոցներով ապահովմամբ և դրանց օգտագործման ձևերով ուսուցմամբ չի սահմանափակվում պետք է նաև մեթոդական աջակցություն ուղղված դասապրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությանը:

Ինչը ուսուցչի համար պետք է ծառայի որպես դասապրոցեսի ակտիվացման, դասի նախապատրաստման, ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց:

Ուսուցման պրոցեսում աշակերտների մտավոր կարողության և կրթության համակարգի փոխադարձ պայմանավորվածությունը պարզելու համար պետք են գիտականորեն հիմնավորված և կիրառական համապատասխան փորձառություն անցած մեթոդական ուղեցույցներ: Միաժամանակ պետք է պահպանել կրթության համակարգի պահանջները՝ ապահովելով դրանց իրագործման հնարավոր և հիմնավոր միջոցները: Այդ առումով, հանրակրթության մեջ առանձնահատուկ դեր ունի «Աշխարհագրություն» դասընթացը, որը Երկիր մոլորակի վերաբերյալ ձևավորում է ամբողջական գիտելիքներ: Աշխարհագրության ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է դասավանդման ավանդական մեթոդների և ուսուցման տեխնոլոգիական ժամանակակից մոտեցումների մասնագիտորեն ճիշտ համադրմամբ, ինչն էլ ուսուցման պրոցեսում կապահովի սովորողների կողմից ՏՀՏ-ների ավելի արդյունավետ օգտագործումը՝ նպաստելով հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Այժմ ցույց կտանք, թե ՏՀՏ-ները ինչ դեր ունեն աշխարհագրության ուսումնասիրման, սովորողների այլընտրանքային մտածողության զարգացման գործում, ինչպես նաև ինչպես են առաջադրանքներ կազմվում:

## **1. ՏՀՏ-ների դերը աշխարհագրության ուսումնասիրման գործում**

Աշխարհագրության դասընթացը առավել արդյունավետ դարձնելու առաջնային պայման է համարվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումն ու դրանց գործնական կիրառումը հիմնական դպրոցում: Աշխարհագրության դասին ՏՀՏ-ների օգտագործումը ուսումնական նյութի յուրացումը դարձնում է ավելի հեշտ և հետաքրքիր, ինչպես նաև խթանում է սովորողների ստեղծագործ, ձևավորելով ստեղծարար կարողություններ: Աշխարհագրական երևույթների մասին գիտելիքները ձևավորվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից, ուստի և տեղեկության ստացումը ոչ միայն պարտադիր է, այլև հանդիսանում է ուսումնական ճանաչողական գործընթացի առաջնային փուլը, այստեղ մեծ տեղ է զբաղեցնում առարկայական և պատկերավոր ընկալումը:

ՏՀՏ-ների ներդրմամբ և դրանց կիրառմամբ աշխարհագրության ուսուցման պրոցեսում առարձնացրել ենք հետևյալ կրթական համակարգչային ծրագրերը՝ ուսումնական, ցուցադրական, վարժանքային, փաստական, տեղեկատվական, հանրագիտարանային, գրադարանային, վերահսկողական, մուլտիմեդիա: Այսպես, նոր նյութի մատուցման և յուրացման գործընթացում նպատակահարմար ենք համարում համակարգչային ցուցադրական ծրագրերի կիրառումը, որոնց միջոցով առավել պատկերավոր և մատչելի ձևով են մատուցվում հիմնարար գիտելիքները: Նշված ծրագրային ապահովմամբ դասագործընթացում ուսուցիչը կարող է ներգրավել տարաբնույթ տեսահատվածներ և հոլովակներ, ուսումնական հաղորդումներ և վարժանքներ, ինչը կնպաստի յուրացվող տեսական գիտելիքների ամրապնդմանը: Մեր կարծիքով ՏՀՏ-ների նպատակային օգտագործումն աշխարհագրության դասապրոցեսում թույլ է տալիս նաև զգալիորեն կրճատել անհրաժեշտ տեղեկատվության կամ ուսումնական նյութի նախապատրաստական ժամանակահատվածը: [2, էջ 9]

ՏՀՏ-ների կիրառումը կրթական գործընթացում հրապուրիչ հեռանկարներ է նախանշում դիդակտիկական տարբեր համակարգերի ներդրման համար:

Այնուհանդերձ նշենք, որ Էլեկտրոնային ուսուցման մեթոդական տեսանկյունները դեռևս համահունչ չեն ՏՀՏ-ների զարգացմանը: Հատկապես մեթոդաբանական խնդիրների մշակման ոչ բավարար մակարդակը Էլեկտրոնային ուսուցման պոտենցիալ և իրական հնարավորությունների միջև խզման պատճառ է դարձել:

Էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը տեղեկատվական կրթական միջավայրի ստեղծումն ու արդյունավետ օգտագործում է: Այդպիսի միջավայրի մշակման և կիրառման խնդրի լուծման մեջ, ըստ դիդակտիկական տեսանկյունի, առկա են հետևյալ հիմնական կողմերը՝

1. աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպումը,
2. դասավանդողների կողմից յուրաքանչյուր աշակերտին ուսումնական գործունեության իրականացման համար անհատական աջակցության կազմակերպումը,
3. աշակերտների խմբային ուսումնական գործունեության կազմակերպումը (բանավեճ, նախագծի համատեղ մշակում և այլն): [1]

Արդի տեխնոլոգիական հնարավորությունների բազմազանությունից աշխարհագրության առարկայի ուսուցման գործընթացում արդյունավետ և իրատեսական ենք համարում հետևյալ բնույթի համակարգչային ծրագրային և տեխնիկական միջոցների մեթոդական կիրառումը:

1. Ուսուցանող՝ նոր գիտելիքի ձևավորման մեթոդներ:
2. Նախավարժանքային ստացված գիտելիքների ամրապնդում, հարցադրումների, վարժությունների, առաջադրանքների միջոցով գիտելիքների յուրացվածության մակարդակի բացահայտման մեթոդ:
3. Չարգացնող լրացուցիչ տեղեկատվության ներգրավմամբ, հարցերի, առաջադրանքների և վարժությունների համակարգի կիրառման մեթոդ, ուղղված սովորողի մտածելու և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:
4. Դաստիարակող՝ սովորողի հուզական ինտելեկտի ակտիվացում, որը նպաստում է անձի հասարակության մեջ կիրառելու իր ընդունակություններն և հաղորդակցական կարողությունները:
5. Վերահսկող՝ ընթացիկ, միջանկյալ և այլ ստուգումների իրականացման մեթոդ, որն ենթադրում է, խնդիրների լուծման նախանշված և փաստացի ուղու

համադրում, ծախսված ժամանակի, թեստերի հարցերին ճիշտ և սխալ տրված պատասխանների անմիջական ստացում:

6. Համախմբող կամ միավորող՝ դասասեյակում առկա բոլոր համակարգիչների ուսուցչի համակարգչի հետ ներցանցային կապի մեթոդ, որն ենթադրում է ուսուցչի կողմից աշակերտների կատարած աշխատանքների վերահսկումը հատկապես տեղեկատվական համակարգերում կողմնորոշվելիս:

ՏՀՏ-ների կիրառման մարտավարությունը մշակելիս առաջարկում ենք հաշվի առնել հետևյալ բաղադրիչները.

- գծային բաղադրիչ, երբ թեմայի յուրացման համար ընտրվում է որոշակի նյութ;
- կառուցողական բաղադրիչ, երբ ընտրվում է թեմային առնչվող խոշորածավալ նյութ, տարածական և երկայնական կապակցմամբ;
- վերլուծական բաղադրիչ, խնդիրների լուծման, խաղարկային, մրցույթային իրավիճակների ակտիվացման համար, երբ սովորողների համար ընձեռնվում է ինքնիրացման և ինքնադրսևորման հնարավորություն;
- ստեղծագործական բաղադրիչ, երբ սովորողն արտահայտում է սեփական գաղափարներն ու դիրքորոշումները:

Աշխարհագրական գիտելիքների հաղորդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման գլխավոր ազդակը կախված է սովորողի ինքնուրույնության, ակտիվության և կոլեկտիվ համագործակցության դրսևորումներով, սակայն այդ դրսևորումների ուղորդման գործընթացում, ուսուցիչը կարող է հանդիպել որոշ դժվարությունների, պայմանավորված իր և աշակերտների ՏՀՏ-ների կիրառման իմացական մակարդակից: Տարբեր է նաև սովորողների գիտական տեղեկացվածության, իմացության և ճանաչողության մակարդակը: ՏՀՏ-ների կիրառման պայմաններում աշակերտը սկսում է արժևորվել անհատական կամ թիմային աշխատանքի, կրթական դժվարությունների հաղթահարման սեփական ընդունակություններն ու կարողությունները: Հիմնական դպրոցում աշխարհագրությունն առարկայի դասընթացը սովորողներից պահանջում է իմացական ոլորտի հետևողական զարգացում, որոշակի մակարդակի ապահովում և պահպանում: Այս հանգամանքով է պայմանավորված աշխարհագրական գիտելիքների հետագա յուրացումը: Ուստի ուսումնական նյութի հաջող յուրացման համար անփոխարինելի են իմացական ընկալման հարթակի վրա կառուցված տեխնոլոգիական մոտեցումները:



ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկան աշխարհագրության դասավանդման գործընթացում առանձնանում է նորարարական և ավանդական եղանակների համադրմամբ: ՏՀՏ-ների կիրառումն աշխարհագրության դասապրոցեսում նպաստում է դպրոցականների տեսողական և լսողական զգայարանների հիշողության զարգացմանը: Դրա կիրառմանը զուգահեռ, անհրաժեշ է օգտագործել նաև ուրվագծային քարտեզներ, խաչբառեր, կիրառել դիտագնական պարագաներ, կողմնացույց, բարձրաչափ, ջերմաչափ և այլն: Այս պայմաններում ակնհայտ է, որ սովորողների, ՏՀՏ-ների և դիդակտիկական ավանդական միջոցների փոխներգործունեության մակարդակի գնահատումը տալիս է ոչ միայն գիտելիքի ըմբռնման, այլև խորության, և հիմնարարության չափանիշերը:

Աշխարհագրության դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկայի արդյունավետությունն ապահովելու նպատակով, ուսուցիչն էլեկտրոնային դասագրքին անդրադառնում է այն ժամանակ, երբ սովորեցնում է հետևություններ անել: Էլեկտրոնային դասագրքերից օգտվելու պարագայում հնարավոր է դառնում նաև աշակերտների կողմից նոր նյութի ինքնուրույն ուսուցումը: Այդ դեպքում ուսուցիչը ներկայացնում է պլանը և հակիրճ նկարագրում այն գլխավոր դրույթները, որ աշակերտները պետք է համացանցում որոնեն և գտնեն, թե՛ դասի ժամանակ, և թե՛ տնային աշխատանքի ձևով:

Ուսուցման յուրաքանչյուր մեթոդ իրենից ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք: Աշխարհագրության ուսուցչի հիմնական խնդիրն է դասավանդելիս առաջնորդվել ՏՀՏ-ների կիրառման հստակ մեթոդաբանությամբ:

## 2. Աշխարհագրության դասի ուսուցման գործընթացի կազմակերպումը

Աշխարհագրության դասաժամերին կարելի է ուսուցման գործընթացը կազմակերպել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հետևյալ միջոցների օգտագործմամբ.

- սահիկաշարեր,
- համակարգչային ներկայացումներ,
- ինտերակտիվ գրատախտակներ,
- համակարգչային ուսուցողական խաղեր,
- համակարգչային թեստեր,
- էլեկտրոնային գրադարաններ,
- կենդանի աշխարհագրություն,
- դպրոցական երկրատեղեկատվական համակարգեր:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ համակարգչային տեխնիկայի կիրառումը թույլ է տալիս բարելավել և արդիականացնել աշխարհագրության ուսուցման գործընթացը: Դեռ 1989թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնգրեսի կողմից հաստատված «Կրթության և տեղեկատվության» մասին դեկլարացիայում նշվում էր, որ ժամանակակից հանրային մշակույթի անքակտելի մաս հանդիսացող նոր տեղեկատվական տեխնոլոգիաները նպատակաուղղված են կրթության համակարգի արդյունավետության բարելավմանը: Վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարված գիտագործնական աշխատանքները հիմնավորեցին ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը: Աշխարհագրությանը վերաբերող համակարգչային ծրագրերն ուղղված են աշակերտների գիտելիքների, ստեղծագործաբար աշխատելու, կարողությունների ձևավորմանն ու փորձի ձեռքբերմանը: Համակարգչային ծրագրերի օգնությամբ արագ կարելի է փոփոխել ուսուցանվող թեմային առնչվող ցուցադրական նյութը՝ քարտեզները, աղյուսակները, սխեմաները, սահիկները և այլն: Դա հնարավորություն է ընձեռում ավելի պատկերավոր ներկայացնել ուսուցանվող թեման:

Միևնույն ժամանակ, համացանցի օգտագործմամբ հնարավոր է ցուցադրել օդալուսատիեզերական լուսանկարներ, կազմել դիագրամներ, գրաֆիկներ և ժամանակի ու տարածության մեջ փոփոխվող աշխարհագրական երևույթների պատկերներ: Անհրաժեշտության դեպքում ուսուցման գործընթացում կարելի է օգտագործել թեմայի բովանդակությանը համապատասխան տեսանյութ: Ի դեպ նկատենք, որ ՏՀՏ արդյունավետ կիրառումը աշխարհագրության դասավանդման գործընթացում ցանկալի արդյունք կապահովի այն դեպքում, եթե դասասենյակը կահավորված լինի համապատասխան նյութատեխնիկական միջոցներով, իսկ ուսուցիչը տիրապետի ուսուցանվող թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությանն ու այդ միջոցները օգտագործելու մեթոդական հմտություններին:

Անդրադառնալով աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության հեշտ յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակներն ու յուրահատկությունները՝ նաև մեր դիտարկումների հիման վրա առանձնացրել ենք համակարգչային ծրագրերի հետևյալ տեսակները՝ վարժանքային, ցուցադրական, ուսուցողական, տեղեկատվական, մոդելավորման և մուլտիմեդիա ծրագրեր: ՏՀՏ բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, առանձնացրել ենք հետևյալ խմբերում՝

1. նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ),

2. էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը,

3. վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային դասարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները, այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է,

4. մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգեր և կիրառական այն ծրագրերը, որոնք աշակերտների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, այն իրականացվում է որպես ազատ հետազոտություն:

ՏՀՏ բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառույթային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն:

Շատ սովորողներ ուսումնական գործունեությունն ինքնուրույն պլանավորելու, ուսումնական արդյունքները ճիշտ գնահատելու ժամանակ հոգեբանական ճնշումներ են զգում: Հետևաբար Էլեկտրոնային ուսուցման կարևորագույն խնդիրներից է դասավանդողի կողմից ուսումնական պրոցեսի ընթացքում անհատական մոտեցում ցուցաբերելն է, այստեղ նաև նշանակություն ունեն դասավանդողի անձնային որակները: Հետևաբար այստեղ դասավանդողի աջակցությունը արտահայտվում է ուսումնական գործունեության պլանավորմամբ, ուսումնական նյութի բովանդակության վերաբերյալ խորհրդատվությամբ, նախագծային ու հետազոտական աշխատանքների կատարմամբ, թեստավորմամբ, գնահատմամբ և այլն: Ուսումնական պրոցեսի կազմակերպման առաջնային պահանջներից թվում է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցում ցույց տալը: Երբ ուսումնական պրոցեսը անցկացվում է խմբային տարբերակով այդ պահանջը մշտապես հնարավոր չէ իրականացնել: Բայց այժմ շնորհիվ ոչ ավանդակիան ուսուցման ձևերից մեկի՝ Էլեկտրոնային ուսուցման միջոցով դասավանդողը կարողանում է ցուցաբերել անհատական մոտեցում, որն էլ իր հերթին առավելություն է դիտվում ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են առավել արդյունավետ ու մատչելի: Սակայն պետք է նշենք, որ անհատական ուսուցման իրականացման գործընթացում չեն ձևավորվում ուսումնական պարապմունքների խմբային ձևերի կազմակերպման ժամանակ ձևավորվող հատկանիշներ, օրինակ՝ թիմում աշխատելու կարողություններ, հաղորդակցական կարողություններ, հանդուրժողականություն, փոխօգնություն, աջակցություն, համակեցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Էլեկտրոնային ուսուցման համակարգերը, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են, քանի որ ինչպես ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:

Հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը նպաստում են ՏՀՏ զարգացումները: Համակարգչային հաղորդակցման միջոցներից առավել տարածված են Էլեկտրոնային փոստը, համացանցը և Էլեկտրոնային կրիչները: Բոլոր այս միջոցները ուսուցիչներին և սովորողներին տալիս է հնարավորություն միաժամանակ օգտագործել տեղեկատվությունը, մասնակցել քննարկմանը: Էլեկտրոնային փոստը լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցման ժամանակ հետադարձ կապերի հաստատման ու համակարգման համար: Դրա միջոցով ուսուցիչն ու աշակերտը միասին կարողանում են բավականին արդյունավետ աշխատել, համագործակցել միմյանց հետ, այդ թվում կարելի է գրավոր շարադրել սեփական կարծիքը, հարցեր տալ, առաջարկություններ անել, ծանոթանալ բոլոր մասնակիցների պատասխաններին, առաջարկություններին և կատարել գնահատում: Ինտերնետային համաշխարհային համացանցը ստեղծում է ստեղծում հեռավար կազմակերպելու Էլեկտրոնային թեմատիկ հանդիպումներ:

Արդի հեռահաղորդակցության այս հնարավորությունները նպաստում են ուսուցման նոր ձևի՝ հեռավար ուսուցման կազմակերպման զարգացմանը: Այն յուրահատուկ կրթական մի համակարգ է, որը հիմնվում է ժամանակակից մանկավարժական, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վրա: Այսպիսիով՝ Էլեկտրոնային ուսուցման համակարգերը միավորում են Էլեկտրոնային ուսուցման կազմակերպման հիմնական գործառույթները՝ ուսումնական աշխատանքի ինքնուրույն կազմակերպման գործընթացում աջակցություն սովորողներին, սովորողների և ուսուցչի անհատական ու խմբային փոխազդեցության կազմակերպումը, սովորողների միջանկյալ ու վերջնական թեստավորումը, ուսուցման գործընթացի հեռավար կազմակերպումը:

Ինչպես արդեն տեսանք որ, այս ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում ինչպես է ժամանակը, առաջացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ, նպաստում աշակերտ-ուսուցիչ փոխհամագործակցությանը, պահպանում աշակերտների կարգապահությունը, ինչպես նաև բարձրացնում ուսումնական գործընթացի արդյունավետությունը: ՏՀՏ կիրառումը միաժամանակ ձևավորում է պատկերացումներ և կայուն գիտելիքներ: Դասավանդումն առավել հեշտ ապահովելու և աշակերտների գործնական աշխատանքը կազմակերպելու համար նպատակահարմար է օգտագործել համակարգչային “Microsoft Office” ծրագրային փաթեթի “PowerPoint” ծրագիրը:

## Եզրակացություններ

Այսպիսով, աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն էապես նպաստում են՝

- Նոր տեխնոլոգիաների, երկրատեղեկատվական համակարգերի և ինտերակտիվ գրատախտակների ինտենսիվ կիրառումը:
- օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ ուսուցիչը հոգեբանորեն նպաստում է աշակերտների կողմից նյութի յուրացման գործընթացին և բարձրացնում դասի արդյունավետությունը, աշակերտների ուսումնական ակտիվությունը, մոտիվացիան, առաջացնում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ, անհատականացնում է ուսումնական գործընթացը, ինչպես նաև նպաստում է ինքնուրույն ուսումնաճանաչողական գործունեության զարգացմանը, տարածական աշխարհայացքի ձևավորմանը:
- արժևորում է աշխարհագրության կիրառական նշանակությունը, նպաստում է դասանյութի հեշտ ընկալմանը, մեծացնում է առարկան ուսումնասիրելու ցանկությունը, նպաստում է տեսական նյութի ավելի ամբողջական յուրացմանը, տեղեկատվական գրագիտության զարգացմանը:
- Նպաստում է հեռավար կրթության, ինքնակրթության և շարունակական կրթության լծակների ստեղծմանը, սովորողներին հնարավորություն է տալիս ինքնուրույն ձեռք բերել աշխարհագրական տեղեկություններ:
- աշակերտների մոտ ձևավորում է թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակեցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն, սեփական տեսակետը հստակ ու պարզ արտահայտելու կարողություն:
- վերը շարադրվածները ենթադրում են մեթոդական նոր ցուցումներ ու ծրագրեր, որոնք աշակերտների մոտ կապահովեն անցում վերարտադրողական մտածողությունից ստեղծագործականի, կձևավորեն կառուցողական մտածելակերպ, տեղեկատվական մշակույթ և այն արժևորելու ունակություն:

# Գրականության ցանկ

1. [http://samuel-elearning.blogspot.com/p/blog-page\\_28.html](http://samuel-elearning.blogspot.com/p/blog-page_28.html)
2. Աջամոլյան Ա. Ա., Աշխարհագրության դասավանդման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մեթոդները, Երևան, 2018
3. Աջամոլյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, Երևան, 2015
4. Աջամոլյան Ա. Ա., Եղիազարյան Կ., Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն էլեկտրոնային ուսուցման գործընթացում և հիմնախնդիրները, Երևան, 2022
5. Աջամոլյան Ա. Ա., Երկրատեղեկատվական համակարգերի կիրառման առանձնահատկությունները և դիդակտիկական սկզբունքներն աշխարհագրության ուսուցման գործընթացում, 2019



